ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ
Անուշավան Պետրոսյան



Լրացավ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնի ազգագրագետ Անուշավան Սաղաթելի Պետրոսյանի ծննդյան 75 և գիտամանկավարժական գործունեության 40 ամյակը:

Ա. Պետրոսյանը ծնվել է 1938 թ. փետրվարի 28-ին, 1956 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը, 1956-1960 թթ. աշխատել Երեվանի շինարարական տարբեր հիմնարկներում, 1960-1963 թթ. ծառայել խորհրդային բանակում, զորացրվել է որպես պահեստի սպա: 1963 թ. ընդունվել և 1967 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը, աշխատել որպես լաբորանտ: 1969 թ., որպես պահեստի սպա, կրկին զորակոչվել զինվորական ծառայության: 1971-1974 թթ. սովորել է «Ազգագրություն» մասնագիտության գծով արտադրությունից կտրված ասպիրանտուրայում: 1977 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել դոցենտի պաշտոն հնագիտության և ազգագրության ամբիոնում: Դասավանդել է ԵՊՀ պատմության, բանասիրության, աշխարհագրության, աստվածաբանության ֆակուլտետներում «Հայ ազգագրություն», «Ազգագրության հիմունքներ» ընդհանուր դասընթացներ: Պատմության ֆակուլտետի մագիստրատուրայում կարդում է հինգ հատուկ կուրսեր, որոնք վերաբերում են հայ ու ընդհանուր ազգագրության հիմնախնդիրներին: Համատեղությամբ տարիներ շարունակ դասավանդել է Գավառի պետական համալսարանում:

Ա. Պետրոսյանը մանկավարժությունը հմտորեն համատեղել է գիտական աշխատանքի հետ, հրատարակել 50-ից ավելի գիտական հոդվածներ ու երկու մենագրություն:

1970-1980-ական թթ. ղեկավարել է ԵՊՀ-ի «Գեղարքունիք» և «Զանգեզուր» ազգագրական արշավախմբերը: Ձեռք բերված դաշտային ազգագրական նյութերը դարձել են կուրսային և դիպլոմային աշխատանքի թեմաներ, դրանք ընկած են նաև Ա. Պետրոսյանի գիտահետազոտական աշխատանքների հիմքում:

Բազմազան են նրա հետազոտական աշխատանքների շրջանակները՝ նվիրված հայ ազգագրության ամենատարբեր հիմնահարցերին.

Անդրադարձել է որսորդության հնագույն եղանակներին ու հմտություններին՝ ըստ հայ մատենագիտության և «Սասնա ծռեր» էպոսի, որոնք լրացվել են իր հավաքած դաշտային ազգագրական նյութերով: Ուշագրավ է գետային ու լճային ձկնորսության ժողովրդական եղանակների, Սևանա լճի ուսումնասիրության, լճում նավարկություն հաստատելու, ձկան որսի արգելքի, ստացված եկամուտների, ձկնորսության հետ կապված բառերի ու դարձվածքների վերաբերյալ շարադրանքը:

Անդրադարձել է Հայաստանում շերամապահության սկզբնավորմանը, զբաղմունքի տեխնիկա-տեխնոլոգիական, սոցիալ-ծիսական տեսանկյուններին, մետաքսի ստացման ու ներկման ժողովրդական եղանակներին, Ռուսաստանում շերամապահության և մետաքսի գործարաններ հիմնելու գործում հայերի խաղացած դերին,

որոնք ամփոփել է «Հայոց շերամապահական մշակույթը» մենագրությունում (1987 թ.):

Ուշագրավ են որսորդության, ձկնորսության, շերամապահության, մի շարք վայրի թռչունների՝ ագռավի, ծիծեռնակի, կռունկի, կաքավի, արագիլի, աղավնու հետ կապված ժողովրդական հավատալիքների վերաբերյալ հրատարակված աշխատանքները, որոնք աղերսվում են մեր մշակույթի հնագույն արմատներին:

Գրականությունը և բանարվեստը դիտել է ազգագրական ուսումնասիրության սկզբնաղբյուր, որ տասնամյակներ շարունակ դուրս է մնացել ազգագրագետների ուշադրությունից: Շուրջ երկու տասնյակ գրողների աշխատանքներից Ա. Պետրոսյանը դուրս է բերել մեծ քանակությամբ ազգագրական վկայություններ, տիպաբանել է դրանք ու դրել գիտական շրջանառության մեջ, որն ամփոփել է «Հայ գրականությունը և բանարվեստը ազգագրության սկզբնաղբյուր» գրքում (2012 թ.): Այն նախատեսված է ընդգրկել «Հայ ազգագրության պատմություն» ընդհանուր կուրսի դասավանդման ծրագրում:

Ա. Պետրոսյանը մասնակցել է Մոսկվայում ռուսերեն լեզվով լույս տեսած «Հայեր» ազգագրական կոլեկտիվ աշխատանքին (2012 թ.):

Նա իր մասնակցությունն է բերել ԵՊՀ-ում երիտասարդ ազգագրագետ կադրերի մի քանի սերունդ պատրաստելու գործին: ԵՊՀ պատմության ֆակուլտետի 90-ամյա հոբելյանի առթիվ, բեղմնավոր գիտամանկավարժական գործունեության համար, 2009 թ. պարգևատրվել է ՀՀ Նախագահի շնորհակալագրով:

Սրտանց շնորհավորում ենք վաստակաշատ դասախոս-գիտնական Ա. Պետրոսյանի ծննդյան 75-ամյա հոբելյանը, ցանկանում քաջառողջություն և ստեղծագործական բեղուն գործունեություն:

Պատմության ֆակուլտետի դեկան, պ. գ. դ., պրոֆ.՝ **Է.Դ. Մինասյան**
Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ՝ պ. գ. դ., պրոֆ.՝
Հ. Ավետիսյան